armavir@mtaa.gov.am

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ« հասարակական կազմակերպություն

Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 563363, 580219, (37494) 40 46 24 , ֆաքս: (37410) 581102 E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

24.02.2014

N-h73-h3

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանին

Հարգելի պարոն Ղահրամանյան,

2014թ. պետական բյուջեով հաստատվել են դպրոցներում ֆինանսավորման ենթակա դրույքները, համաձայն որի՝ 2013թ. համեմատությամբ աճել են ֆինանսավորման ենթակա ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի դրույքները և նվազել են մանկավարժների, հաշվապահների, վարչական անձնակազմի դրույքները:
«Հետք»-ը հոդված է պատրաստում դպրոցներում բյուջեի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում ընթացող հաստիքային կրճատումների վերաբերյալ, ինչի համար մեզ անհրաժեշտ է հետևյալ տեղեկատվությունը.

1) Մարզպետարանի ենթակայության ո՞ր դպրոցներում են արդեն իրականացվել կրճատումներ այս փոփոխությունից հետո:
2) Քանի՞ հոգի է կրճատվել յուրաքանչյուր դպրոցում և ի՞նչ հաստիքներ էին զբաղեցնում կրճատված աշխատակիցները:
3) Բյուջեի վերոնշյալ փոփոխությունից հետո քանի՞ հոգի է ընդունվել աշխատանքի դպրոցներում և ի՞նչ հաստիքներում (խնդրում ենք նշել ըստ դպրոցների):

Կանխավ շնորհակալություն

«Հետաքննող լրագրողներ» հ/կ նախագահ,
«Հետք» թերթի գլխ. խմբագիր

Է. Բաղդասարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 2276-14
24 02 2014թ